

**«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացվող բնական գազի առևտրային հաշվառքի սարքի ստուգաչափման արդյունքում կատարված վերահաշվարկներին առնչվող հաշվետվության տեղեկատվության հավաստիության մոնիթորինգի արդյունքները**

**Մոնիթորինգի իրականացման հիմքը.**

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 14-ի №253Ն որոշման հավելվածով հաստատված՝ Էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց գործունեության մոնիթորինգի իրականացման կարգը, ինչպես նաև հանձնաժողովի 2018 թվականի տարեկան աշխատանքային ծրագրի 28-րդ կետը:

**Մոնիթորինգի օբյեկտը.**

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն), Ընկերության գազիֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղերը (այսուհետ՝ ԳԳՄ) և ԳԳՄ-ների տարածքային տեղամասերը (այսուհետ՝ ՏՏ):

**Մոնիթորինգի առարկան.**

1. Ընկերության կողմից հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության հավաքագրման համապատասխան ընթացակարգերի առկայությունը.
2. Ընկերության կողմից տեղեկատվության հավաքագրման գործընթացի համապատասխանությունը սահմանված ընթացակարգերին.
3. Սկզբնական փաստաթղթերում գրանցված տեղեկատվության համապատասխանությունը հանձնաժողով ներկայացված տեղեկատվությանը:

**Մոնիթորինգի նպատակը.**

Ընկերության կողմից ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացվող՝ բնական գազի առևտրային հաշվառքի սարքի ստուգաչափման արդյունքում կատարված վերահաշվարկներին առնչվող տեղեկատվության հավաստիության ուսումնասիրություն և «Առևտրային հաշվառքի սարքերի խախտման դեպքում Ընկերության կողմից կատարված

վերահաշվարկների և հաշվարկված տույժերի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 2-ի №146Ս որոշմամբ սահմանված ձևերին համապատասխան ներկայացվող տեղեկատվության հավաստիության ստուգում:

**Մոնիթորինգի իրականացման ժամկետը՝ 2018 թվականի ապրիլի 3-7-ը:**

**Մոնիթորինգի արդյունքները.**

1. Ընկերությունում ներդրված է հանձնաժողով ներկայացվող բնական գազի առևտրային հաշվառքի սարքի ստուգաչափման արդյունքում կատարված վերահաշվարկներին առնչվող տեղեկատվության հավաքագրման և ներկայացման ընթացակարգ:
2. Տեղեկատվության հավաքագրման գործընթացը համապատասխանում է առևտրային հաշվառքի սարքի ստուգաչափման արդյունքում կատարված վերահաշվարկներին առնչվող հաշվետվության հավաքագրման և ներկայացման ընթացակարգին:
3. Սկզբնական փաստաթղթերում գրանցված և հանձնաժողով ներկայացված տեղեկատվության համադրության արդյունքում խախտումներ չեն հայտնաբերվել: ԳԳՄ-ների կողմից ներկայացված առևտրային հաշվառքի սարքի ստուգաչափման արդյունքում կատարված վերահաշվարկների քանակին առնչվող տեղեկատվության ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել են անհամապատասխանություններ, որոնց վերաբերյալ Ընկերությունը իր 2018 թվականի մայիսի 8-ի №01-31/1794 գրությամբ ներկայացրել է իր պարզաբանումները՝ նշելով, որ դրանք հետևանք են ընկերության գլխավոր գրասենյակում գործող հանձնաժողովի կողմից վերահաշվարկի վճարումից ազատված բաժանորդների թվի ԳԳՄ-ների տեղեկատվության մեջ ներառմամբ:
4. 2018 թվականից սկսած՝ առևտրային հաշվառքի սարքերի ստուգաչափման արդյունքում արձանագրված խախտումների մասով կատարված վերահաշվարկների վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը

մշակվում, ամփոփվում և պահպանվում է Ընկերության կողմից մշակված և ներդրված «Գազ-2007» համակարգչային ծրագրով:

5. ԳԳՄ-ներում և ՏՏ-ներում առկա են համապատասխան հրամաններով մշտական գործող հանձնաժողովներ, որոնք քննության են առնում բաժանորդների կողմից վերահաշվարկների վերաբերյալ բողոքները, կատարում են համապատասխան ճշտումներ և դրանց մասին սահմանված ժամկետներում տեղեկացնում բաժանորդներին: